

ՍՏԵՓԱՆ ՔՈՉԱՐԵԱՆ

ԼԵՈՆ ԱՔԱՐԷԿԵԱՆ

ԻՐԻՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԺ ՈՒ ՄՏԱԺՈՂ

Ա

1918 թվի ապրիլի 2-ին թաթար ամբոխի զնդակի զոհ զնաց հայ Սոցիալիստ - Յեղաիօթականների անւանի առաջնորդը՝ Լեոն Աթարէկեան, երբ խաղաղութեան ձիթենին ձեռքին, մէկ ոռւս եւ մէկ թաթար պատւիրակները ընկերակցութեամբ դիմում էր թըրքական թաղն իբրեւ բանազնաց՝ վերջ տալու հայ - թաթարական արիւնհեղութեան: Պատգամաւորութիւնն ինքնին խորհրդանշում էր միջազգային համերաշխութեան իդէալը - հայ, ոռւս, թաթար իսկ այդ զաղափարի ժամանակի ամենացայտուն արտայայտիչն էր թերեւս Կովկասում օրւայ խոշոր զոհը՝ Աթարէկեան:

Աթարէկեան ծնւել է Շուշիում, 1875 թւին: Միջնակարգ կըրթութիւնն ստացել է տեղի բէալաիկան դպրոցում, իսկ բարձրագոյնը՝ Շվեյցարիայում, ուր վերջացրել է Յիւրիխի համալսարանն իբրեւ բժիշկ: Դրանից յետոյ պետական քննութիւններ տալով Կազանի համալսարանում՝ իրաւունք է ստացել զբաղւել իւր մասնագիտութեամբ Ռուսաստանում:

Ունենալով ուժեղ հասարակական ջիղ եւ մտաւոր բարձր կարողութիւններ, զեռ ուսանողական շրջանից մասնակցել է ժամանակի հայ հասարակական շարժման՝ սկզբնապէս աշխատակցելով «Դրօշակ»ին:

1903-ից Շուշիում սկսւում է նրա Կովկասեան դործունէութիւնը: Անդամակցում է Դաշնակցութեան եւ զաղափարական պայքար մղում այդ կուսակցութիւնից անջատուող տարրերի դէմ:

1906-ին իբրեւ պատգամաւոր մասնակցում է Խրիմեան կաթողիկոսի էջմիածնում հրաւիրած «Հայոց Կենտրոնական Ազգային Ժողով»ին:

Նոյն թւականի վերջերում սակայն հեռացաւ Դաշնակցութիւնից եւ մի խումբ երիտասարդ մտաւորականներէ հետ գլխաւորեց Անջատականների հոսանքը, որ սկզբնապէս «Երիտասարդ Դաշնակցա-

կանները իմբալ» էր կոչում:*) Անջատելու առիթները բաղմաթիւ էին: Ամենից առաջ Աթաբէկեանին զբաղեցնում էր Սոցիալիզմի հարցը: Դաշնակցութեան մէջ այս ուղղութեամբ բուռն պայքար կար այն ժամանակ. կային սոցիալիզմի պաշտպաններ եւ հակառակորդներ: Աթաբէկեան պաշտպանում էր սոցիալիստական տեսակէտներ ոչ ըստ Մարքսի տեսութեան: Դէմ լինելով պատմական մատերիալիզմին, նա յենում էր ռուս Սոցիալիստ - Յեղափոխականների աւանաւոր տեսաբաններին՝ Լաւրով, Միխայլովսկի, Չերնով:

1907-ին նա Ռիխարդ ծածկանունով հրատարակում է «Ազգութիւն եւ Դասակարգ» բրոշիւրը, որի մէջ բնորոշում է աղղութեան գաղափարը Լաւրովի հետեւողութեամբ:

Միւս կողմից Աթաբէկեան կարծում էր, որ հայ աղգային չափերը թելադրում են հայ մտաւորականութեան ձգտել առաջնակարգ դիրքեր զբաւել ռուս առաջաւոր հասարակայնութեան շրջանում, ինչպէս անում էին վրացիները եւ այդ պատճառով էլ նա դէմ էր յեղափոխական կուսակցութեան կազմակերպական աղգային ձեւին:

Աթաբէկեանի համար մեր երկիրը նման էր դուռ ու պատուհան ամուր փակած մի խրճիթի, որի ներսի օդն այդ պատճառով նեխած էր: Անհրաժեշտ էր լայն բանալ դռներն ու պատուհանները, ներս թողնել դրսի թարմ հովերը եւ այդպիսով մաքրել խրճիթի անմաքուր օդը: Ըստ այսմ՝ լինելով խոշոր մտաւորական նաեւ համառուական չափով եւ ջատագով միջաղգային համբաւչիութեան, նա մինչեւ վերջն էլ կառչած մնաց հայ իրականութեան եւ իւր բովանդակ կարողութիւններն ի սպաս դրեց մեր երկրի քաղաքական - մշակութային բարգաւաճման:

Կար նաեւ Արեւմտահայ խնդիրը, որ պակաս դեր չկատարեց Աթաբէկեանի Դաշնակցութիւնից հեռանալու խնդրում: Լինելով կողմնակից մեր երկու դատերի անջատման, Աթաբէկեան ընդունում էր, որ կովկասահայերն իրենց խնդիրը պիտի կարգադրեն համառուական միջոցներով, ինչպէս եւ արեւմտահայերը պիտի գործէին համատաճկական եղանակներով: Այս տեսակէտից ուշադրաւ է նրա «Ինչո՞ւ Եմք անջատուում Դաշնակցութիւնից» գրքոյկը՝ գրած Բագուում 1907 թ.:

1908 - ին Լեւոն Աթաբէկեան ձերբակալելով բանտարկւեց իբրեւ դաշնակցական ուրիշ շատերի հետ՝ Լըիթինի յայտնի մեղադրական գործով: Եւ Դաշնակցութիւնից արդէն անջատւած ու այդ

*) Տես Վ. Միխայլովսկիի յօդածը՝ Անջատականները, «Վեմ», քիւ Ա.Լ.Բ., 1933:

չըջանում նոյնիսկ Դաշնակցութեան դէմ բուռն պայքար մղող Լեւոն Ա. Թարէկեան ոչ մի տեղ չաշխատելով հերքել իր, իբրեւ դաշնակցականի, դէմ բարդած մեղադրանքները, դատապարտեց բանտարկութեան Նովոչերկասկ քաղաքում:

Բանտից նա ազատեց 1912-ին եւ իր ամբողջ ուշադրութիւնը յատկացրեց «Սոցիալիստ – Յեղափոխականների Կուսակցութեան Հայ Կազմակերպութեան» ձեւաւորման՝ աշխատակցելով միաժամանակ եւ «Ազգագրական Հանդէս», «Առողջ Կեանք» եւ այլ թերթերի:

1906-ի Ռուսական Ա. Յեղափոխութեան հետեւող յետաշրջումն իր անդրադարձումն ունեցաւ եւ կովկասեան հասարակական կեանքի վրա: Սկսեցին հալածանքներ. փակեցին բացած բերանները եւ սահմանափակեցին հասարակական հարցերի շրջանակները: Ազատ քաղաքական գործունէութիւնը նորէն կալանքի տակ առնեց ողջ Ռուսիայում: Այս պայմաններում կուսակց., այն էլ սոցիալիստական լեզալ մամուլը դարձաւ բացարձակապէս անհնարին եւ, ինչպէս բոլորը, նոյնպէս եւ Ա. Թարէկեան զրկեց իւր առելիքը լրիւ եւ ազատ արտայայտելու հնարաւորութիւնից: Եւ հակառակ դժբաղան, նա դարձաւ կովկասահայ կեանքի մի շարք նոր զաղափարներէ հրձիգ: Նա իւր սուր մտքով կարողանում էր զարմանալիօրէն ճիշտ գտնել ու հրապարակ նետել հարցեր, որոնք հրատապ էին, կենսական եւ յուզում էին հասարակական լայն շրջանակները: 1912-ի շրջանում նա կարգում էր դասախօսութիւններ Թիֆլիսի ժողովրդական համալսարանում: Դուած խնդիրներն ընդհանրանում էին եւ մտքերի երկար փոխանակութեան նիւթ մատակարարում մամուլում կամ հրապարակային դասախօսութեանց մէջ, որոնք տեղի էին ունենում Թիֆլիսում, Բազում եւ Երեւանում: Այդպիսի հարցերից էին – 1. Հայ մշակոյթի ապագան. ի՞նչ է սպասում նրան – ձուլում ռուսականի հետ, թէ ազգային ուրոյն զարգացում: 2. Հայ մտաւարականութիւնը, նոյնպէս նման առաջադրութեամբ: 3. Պատմահայեցողական խնդիրներ. պատմական մատերալիզմ, ազրար սոցիալիզմ, ազգութիւն եւ միջազգայնութիւն եւ այլն:

1912-ի շրջանում հայ բովանդակ հասարակական միտքն զբաղւած էր արեւմտահայ գաւառների բարենորոգմանց խնդրով: Ինչպէս ուրիշ վայրերում, նոյնպէս և Թիֆլիսում գործում էր փոխաբ. գիտութեամբ, բայց անպաշտօն Ազգային Բիւրօն, որի գլխաւոր դերակատարներն էին Մեսրոպ Եպիսկոպոս, Սամսոն Յարութիւնեան, որ այն ժամանակ Դաշնակցութեան տեսակէտներն էր պաշտպանում, եւ դաշնակց. պարագլուխներ: Այս այն մարմինն էր, որ պատերազմի

սկզբում Ազգային ղեկավար մարմնի հանգամանք ստացաւ եւ կազմակերպեց կամաւորական շարժումը:

Աթաբէկեան դէմ էր այդ շարժման. նրա տեսակէտով կամաւորական խմբերի ստեղծումն աւելի պիտի զրգռէր տաճիկներին եւ աղէտաբեր լինէր մեզ համար: Հետագայ դէպքերն ապացուցեցին, որ նա հիմք ունէր այդպիսի կասկածներ ունենալու:

1917-ին պայթեց ռուսական Յեղափոխութիւնը: Աթաբէկեանը գործօն մասնակցութիւն ունեցաւ նրա մէջ Բազումում եւ Թիֆլիսում: Վրա հասան Ռուսիոյ Մահմանադիր Ժողովի ընտրութիւնները: Աթաբէկեան մեծ հռչակ ունէր հայ շրջանակում և ճանաչած ղեկավարն էր սոց.-յեղափոխ. տրամադրութիւններ ունեցող եւ ընտրող ռուս բանակի, որ այդ ժամանակ դեռ կանգուն էր եւ կովկասը չէր լրջել: Նրա հմայքը տարածւում էր եւ վրացական շրջանակներում, որով զարմանալի չէ, որ Մահմանադիր Ժողովի ընտրելիներէ մէջ առաջնակարգ տեղ զբաւեց նա սոց.-յեղափոխականների ցանկում:

Լեւոն Աթաբէկեանի հանրային գործունէութեան ու հայ հասարակական կեանքում կատարած դերին արժէ յատուկ ուսումնասիրութիւն նւիրել: Մեր այսօրւայ նպատակը այդ չէ, սակայն: Որպէս ճոխ բնակորութիւն ու բազմակողմանի հետաքրքրութիւն ունեցող անհատ, նա թեւակոխել է նաեւ արեւստի մի այնպիսի բնագաւառ, որ թւում է, թէ ամենից քիչ պիտի զբաղեցնէր նրան: Նա գրել է մի շատ բանաստեղծութիւններ, որոնք իրենց զբաղական շահեկանութեան հետ միասին, արտացոլում են միաժամանակ այդ հետաքրքրական գործչի բարձր անհատականութիւնն ու բարդ հոգին: Մեր այս յօդւածի նպատակն է վեր հանել Աթաբէկեանի նշանակութիւնը, իրրեւ բանաստեղծի ու մտածողի:

Բ

Եթէ մէկն ինձ հարց տայ—բանաստեղծ է արդեօք Աթաբէկեան թէ ոչ, թերեւս բացասական պատասխան ստանայ: Զի նա բանաստեղծ չէ սովորական առումով. պրպտող է եւ հետախոյզ, անհանգիստ միտք ունի, որ ի վերջոյ ոչնչով չի բաւարարւում: Շօշափած նիւթերն իր համար ժամանցի առարկաներ են, որոնք զբաղեցնում են իրեն մի պահ միայն: Սահում է պահը, երեւոյթը դառնում է ձանձրալի, որի հետեւանքով ստեղծւում է մի նոր հերթական պատճառը՝ որոշ ժամանակից յետոյ իւր տեղը մի ուրիշին զիջելու համար: Ստեղծւում է յաւիտեանական սկեպտիկ, որ մերթ ընդ մերթ,

տարբեր աշխարհներում, իր կենսական նուրբ տպաւորութիւնները բանաստեղծական շրջանակի մէջ է առնում — լաւագոյն ձեւը թերեւս, չբաւարարող լայն հոգու համար՝ մարդու էութեան փոքրութեան ու անճարակութեան գիտակցութեան առաջ կանգնելիս: Վերջին հաշուով այն տպաւորութիւնն է ստացւում, որ այս մարդը հաւատ չունի եւ իր սուր մտքի ու բարձր իմացականութեան շնորհիւ՝ քայլում է կեանքում մենակ ու... անմխիթար, անապատում դեզերող վիրաւոր առիւծի նման, որ վազում է իր Տապանագիրը չալակած:

Անծայր անապատ: Աւազի վերայ, սկզբում, հաստատ
ու վեհ քայլերի

Խիստ շրջագծւած խոր ու նուրբ հետքեր եւ կաթիլներով
սառած մուգ արիւն,

Ապա մրբկոտ, մոլեգնած վազքի տոնել փորւածքներ
եւ արեան քծեր...

.....
.....
.....

Այս անապատով մարդուց վիրաւոր մի արեւայական
առիւծ է անցել*)

Մտածումը նրան պարապի առաջ է կանգնեցնում: Կեանքի երեւոյթների շատ կողմեր նրան ոչինչ չեն ասում: Այն, ինչով երջանիկ է մարդ, փոքրիկ երեւոյթների համադրումն ու շողկապումը, որոնցով խարուսիկօրէն շրջապատում է իրեն սովորական անհատը՝ ճշմարտի ահաւորութիւնը տեսնելուց խուսափելու համար, ուժեղ կամքից հայածական Աթաբէկեանին կանգնեցնում է միայն ունայնութեան առաջ: Երբ կեանքը իւր էութեամբ նեղ է դալիս իրեն եւ դրա ընթացիկ արտայայտութիւնը ձանձրալի դառնում, քրմահաճ երեսայի պէս, նա մի խաղալիկից միւսին է անցնում՝ շուտով ձանձրանալով մէկից եւ միւսից:

Դիտեցէք, մտքի, աշխարհագրական տարածութեան ո՞րպիսի լայն շրջագիծ ունի մեր հեղինակը: Մի ոտքը ժընեւ, Լայպցիգ, միւսը՝ Մոսկովայի վրայով Ղարաբաղ: Առաջիններում ստրուկ չէ մտքի, այլ հաւասարի կեցւածք ունի: Բարձրորակ մտաւորական է՝ անկախ դատողութեամբ եւ շեշտած անհատականութեամբ. անձ-

*) Լ. Աքաբէկեան — Բաղաստեղծութիւններ, Բագու, 1913:

Նախան մեծութեան եւ արժէքների հպարտանքն ունի: Մտքի քառասմբակ վաղքին յաճախ զգայցմունքն անդօր է հետեւել, տեղի է տալիս, որով մաքուր քնարերգուն դառնում է «սոցիալական մոտիվներ» երգիչ — քաղաքացի: Այստեղ էլ կամ ամբողջ է տեսնում կամ Շհովայի կամքով շարժող, անկամ էակներ:

Ասաց եեովան.

«Առաջին ֆիչրդ եւ վերջին ֆիչրդ
պիտի լինի լաց.

«Մի անգամ միայն ժպտալու համար պիտի արտասւես
դու հագար անգամ:

«Կատարելութեան անյագ կարօտը պիտի լալի քեզ
մինչեւ քո վախճան.

«Յաւիտեան գամաժ գորշ հողագնդին պիտի գառանցես
աստղերի մասին.

«Աւելի դաժան քան իմ դեւերը, ինքդ կը լինես
դեւդ սեփական»...

Եւ այսպէս՝ իւր ազատութեան հետ չհամակերպող Աթաբէկեան տընում է ստեղծել իւր համար որոշ կենցաղակերպ՝ ժամանակաւորապէս սփռիող հերթական պատրանքներ, որոնք չուտով յօգս են ցնդում, որով քերականաւորն ամփոփւում է ինքն իր մէջ եւ իւր, տիեզերականօրէն չափազանց նեղ ու սահմանափակ, խեցիկց՝ ճղնում կեանքի ու մահւան առեղծաժը լուծել:

Ահ, եթէ մահը տանջանք չըլինէր,
էլ ով կըկայէր աշխնդակ կեանքին
Եւ եթէ կեանքը մի վայելք լինէր,
էլ ով կերպէր մեռնելու մասին.

Մահի սոսկումից փարում եմք կեանքին,
Կեանքի սարսափից մահ եմք երազում...
Ինչ էլ որ անեմք, ծիծաղեմք քէ լանք,
Կեանքից ու մահից չունեմք փրկութիւն.

Սիրտը խօսում է քարքարոտ Ղարաբաղում, ճաշակը դարգանում Բեօկլինի ստեղծագործութեամբ: Կեանքի կսկիծը մերւում է խորհրդին, որով խորհրդապաշտ նկարիչը իւր հոգու մրրիկներն է յաղթահարում.

Բեօկլիին, որ տւիր մրկոտ հոգուս
 լոյս խաղաղութիւն,
 Որ ծաւալեցիր հարիզոններս
 մինչ անհունութիւն,
 Որ էութեանս խորին խորհուրդը
 յայտնագործեցիր
 եւ ինձ սրբազան ներհայեցութեան
 բախտն ընծայեցիր,
 Բեգ, մրրիկներիս յաղթահարողիդ,
 Հոգուս խորքերը լուսաւորողիդ
 Յաւիտեական փառք եւ օրհնութիւն:

Շատերն են եղել մեր գրողներից Եւրոպայում. շատերը պարզ
 ընդունողներ են միայն եւրոպական, յաճախ վիճելի արժէքների:
 Աթաբէկեան, երեւոյթների առարկայական վերլուծմամբ, կեցած է
 սրանց դիմաց իբրեւ իրենց նման հաւատարմ քաղաքացի, որ ընտրում
 է այն, ինչ իրեն պէտք է: Արժէքաւորում է ծառուտը, որ դաշն է
 իր կուլտուրական մարդու ճաշակին, բայց զգացմունքների աշխարհում
 փրկութիւն է որոնում հայրենի չորանի ու կարաբաշի մօտ:
 «Գրչի խաղ է» «Զոքանն ու Կարաբաշը» ոտանաւորը իւր համար,
 բայց այդ գրչի խաղն արւած է մայրենի քարքառով, ուր գտնւում
 է մեր բանաստեղծը իւր բովանդակ յոյգերով: Յաւում ենք, որ այս
 գեղեցիկ, բայց երկար կտորը չենք կարող մէջ բերել այստեղ:

Գեթօթէն հմայում է Աթաբէկեանին. նրա մեծութիւնն ստիպում
 է խոնրահւել իր առաջ: Եւ երբ նրա պէս Աթաբէկեան «գրոյց է ա-
 նում ինքն իր հետ, օրօրում ցաւն ու կարօտը», այդ պահին յիշում
 է մօրը, մայր երկիրը, որի ցաւերով ապրում է եւ սոցիալական
 վշտի երգիչը, չղթայական ու անդօր՝ իր առաջ, հեծեծող մօր,
 իբրեւ աղապիսիի, հողին է տեսնում «Մօր նամակի» մէջ:



Աթաբէկեան մաքրակրօն բանաստեղծ է: Բանաստեղծը չի ու-
 սուցանում. խորհրդածում է կամ ապրում. ապրումներն էլ ամփո-
 փում են սիրոյ, երգի, բնութեան կամ հայրենիքի շուրջ ընդհան-
 րապէս: Բանաստեղծը գրում է այն ժամանակ, երբ տպաւորւած՝
 քաշւում է իւր առանձնութեան մէջ եւ սրտի հառաչներ արձակում:

Այստեղ եւս՝ մեր բանաստեղծի հոգուն անհարազատ են աշ-
 խարհի ցաւերը. խորթ են՝ սուտը, դաւը, բամբասանքը: Նա կեանքի
 վրա նայում է աստուածային կատարելութեան հայեացքով եւ ներո-
 ղամիտ է մարդկանց վատ արարքների հանդէպ: Զտարիւն բանաս-

տեղծը հեռու է աշխարհի չարից ու բարուց եւ ընդհանրապէս անհագորդ սրա սոցիալական տարուբերումներին, որոնք դառնում են արդէն, մաքուր քնարերգուից մերժող, քաղաքականութիւն: Հըսարտութեան գիտակցութիւնն է ունեցել արեւստաւորն ամեն անգամ, երբ շեշտւել է իր երկրի քաղաքական միտումից դերժ լինելը:

Այդպէս էր առաջ:

Մեծ պատերազմին յաջորդող բոլշեւիկեան յեղաշրջումը սակայն ձեւափոխել է շատ դէպքերում եւ արեւստի ըմբռնումը՝ դնելով արեւստաւորի առաջ ուրոյն խնդիրներ: Բանաստեղծն արդէն պարզ սէր ու բնութիւն երգող չէ. նա շատ յաճախ քաղաքական պրոպագանդ է անում: Ա'րդ, եթէ աշօր բանաստեղծին թոյլատրւում է լքել մաքուր արեւստի բնագաւառը եւ երգել նաեւ համայնքի ընթացիկ կեանքը՝ պահանջւած բովանդակութեամբ, ապա այս տեսակէտից Աթաբէկեան թերեւս շատ աւելի խոշոր է, քան խորհրդային բանաստեղծներից շատերը: Զի սա առ հարկի չի գրում եւ ոչ էլ քաղ. գրագիտական ընթացիկ պատէր կատարում. գրում է հարագատ իր մտքին եւ դատմունքի երկրորդ շարք մղելով է արդէն, որ նրանից ստեղծւում է նախ մտածող, ապա բանաստեղծ:

Ուրեմն, Աթաբէկեան մեր գրականութեան մէջ ոչ թումանեան է, ոչ Իսահակեան, ոչ Տէրեան, ոչ էլ Դուրեան կամ Մեծարենց: Իրականութիւնից կտրւած, իր յուզւած հոգուն ուրոյն աշխարհի կերպ տւած՝ Թումանեանի նման փիլիսոփայի սլաքներ չի ուղղում որոշելու համար, թէ աշխարհներից «Ո՞րն է լաւը — Է՞ս, թէ էն», ոչ էլ թողած մարդ ու համայնք, անաստի ճամբան է բռնում եւ դէպի ցնորահանք ուխտում: Մտածողութեան կենտրոնը Հրաշք-աղօղիկը չէ եւ ոչ էլ սիրոյ ինքնամոռացութեան մէջ գիշերային մշուշ ու ստեր է տեսնում: Մեծարենցի գիշերական աղի յուշերով չի ապրում եւ ոչ Դուրեանի պէս յուսալքւած՝ պարտւած սիրոյ մշտի սփոփումը լիակի հալելու անդադարձման մէջ է որոնում: Մարէութիւնն ու տատրանքը իւր իդէալը չեն. կեանքը դիտում է ախպէս, ինչպէս կայ եւ սրա դատանութիւնը իւր մէջ յուսալքում չի առաջացնում: Նա գիտէ, որ

Մարդը մարդուն երաժիշտ է, մարդը մարդուն՝
մի ջութակ.

Մարդ-ջութակը մարդու ձեռքին կամ երգում է,
կամ ունում:

Մարդը մարդուն հանելուկ է, մարդը մարդուն
նպատակ .

Մարդը մարդ է միշտ դրանում եւ իրեն է
սոսկ գտնում...

Իբրեւ զգացող, տառապող հոգի ունի եւ թախծոտ է իւր քը-
նարերգութիւնը .

Աշխարհը հինգ օր ունի,
Հինգն էլ սեւ...
Կուգես լա՛ց, կուգես խնդա՛...*)

Իբրեւ մտածող սուղուամ է երեւոյթների խորքը ու ճգնում կեանքի
առեղծւածը լուծել: Եւ եթէ այստեղ սաղմնային է մաքուր քնարեր-
գուն, ուժեղ է սակայն պրպտողն ու բժիշկը, որ սպեղանի է որո-
նում աշխարհի հրամցրած ցաւերին: Մարդն է կանգնած հանրու-
թեան մէջ. դասալիք չէ, որ միայնութեան մէջ մորմոքի եւ ընդհա-
նուր դառնութիւնը իւր հոգու քամիչից անցնի: Ընդհակառակն, Ա-
թաբեկեան հանրային վիշտը ճշմարտի որոնման յաւիտենական պըր-
պտումների մէջ է ուղղում թաղել: Սրտի ողբը նրան տարել է դէպի
անապատ, ուր ոչ թէ հառաչի, այլ բացի առաջ է կանգնել, որով
եւ տարբերում է մեր միւս բանաստեղծներից:

Յովհաննիսեանը երգում էր .

Լուռ կաց, սիրտ իմ, այս աշխարհում
Դարդ իմացող չես գտնի.
Մեզպէսներին ջուրն է բերել,
Ջուրն էլ մի օր կըտանի:

Հանգստի հրաւէր էր ուղղում իւր վիրաւոր սրտին եւ Իսահա-
կեանը .

Ի՞նչ ես գազազում, ա՛յ վիրաւոր սիրտ.
Որ գազազում ես, ի՞նչ պիտի անես.
Աշխարհը իրա մամբով կընքանայ,
Դու խեղն, դու անգոր, ի՞նչ պիտի անես:

Աթաբեկեան պարտաճի կամ խեղճութեան հոգի չունի: Նա
մեղկօրէն չի հաշտում դրութեան հետ, որովհետեւ աշխարհն իր
ճամբով պիտի ընթանայ, ոչ էլ ընդունում է, թէ ինքը նրանից է, ո-
րոնց ջուրն է բերում եւ ջուրն էլ տանելու է: Համակերպութիւնը
չէ, որ ղեկավարում է իրեն, այլ հասուն մտքի մորմոքը, որ երե-

*) Բնագիրը Թաթարերէն է գրած:

Լոյթները պատճառն է որոնում եւ չգտնելու դէպքում՝ այլու՛մ ներքնապէս: Նա գիտէ, որ սիրտը մարդկային իմացականութեան համար յաճախ աւելորդ բեռ է եւ զուտ յուզումների աղբիւր, ինչպէս եւ յոգնութեան պատճառ.

Այսօր ասի իմ գիծ սրտին.
 «Երկա՞ր պիտի այդպէս մնաս.
 «Քունիքն տե՛ս, մերմակեցին,
 «Ժամանակ չէ՞ որ ծերանաս:
 «Ինձ պէս յագնած հիւանդ մարդուն
 «Ջահել սիրտը ի՞նչ կը սագի.
 «Քեզ պէս սիրտը միտքս հասուն
 «Կարօտներով գուր կը յուզի...»

Նա ապրել է երբեմն սրտի յոյզեր, բայց անցել է այն շրջանը, երբ կեանքը վառ շողերի մէջ էր դեռ եւս իր համար: Դիւրին չէ եղել այդ անցումը, միմուռներ ունի տակաւին: Բայց չէ որ սրտի հետ եղած շրջանում նա անապատներ է տեսել միայն.

«- Ա՛յ, ես ու դու շատ ման եկանիք
 «Եւ ի՞նչ տեսանիք - անապատներ:
 «Սիրտ իմ, սիրտ իմ, եկ դառնանիք տուն,
 «Քանի քայլ եմ մեր տան դռներ:»

Ու սրտի գծով անապատներ տեսնելուց յետոյ եւ իր վերջին հրաժեշտը տալով դրան «կայարանի կամարների տակ», Աթաբէկեան դառնում է մտքի գծին: Խուլ հեկեկանք եւ մի պարապ է բաժանում նրան առաջինից: Բայց նա որոշակիօրէն անապատներ չի սիրում. ուստի սրտին տան դարձնելով՝ Աթաբէկեան մտնում է մարդկային ժխորի մէջ:

Եթէ գեղեցկութեան տենչացող բանաստեղծի հոգին յոյզերի բնադաւառում միմիայն անապատներ տեսաւ ու հեռացաւ, ապա իրական աշխարհում տրամաբանութիւն որոնող միտքը տեսնում է խաբէութիւն եւ ոյժ: Նա տեսիլներ ունէր, որոնք օրօրում էին իրեն դեռ այն ժամանակ, երբ շատ բանի անհաղորդ էր իր երկտա-սարդ հոգին: Երբեմնի իդէալի ու արդի իրականի համադրումից բանաստեղծի համար ստեղծւում է քաոս - ապրածն իրական կե՞անք է եղել, թէ՛ երազ.

Ես մոլորելի եմ մունջ տեսիլների
 այս քաոսի մէջ...
 Իմ գոյութիւնը դարձել է կարծես
 երազ ու տեսիլ...

Եւ չըզիտեմ ես, մունջ տեսիլների
այս քառսի մէջ
Ապրե՞լ եմ իրօք, քէ կեանքի մասին
երազ եմ տեսել...

Մի՞թէ մարդ իրօք խաղալիք է ինչ որ վերին անխմանալի ոյժի ձեռքին, որ տալիս է նրան ուղած ուղղութիւնը՝ նախորոշելով ասես մարդու դոյութիւնն ու անելիքները: Ղարաբաղի բարբառով գրւած «Բայաքի» փիլիսոփայական բանաստեղծութեան մէջ, Աթաբէկեան կանգնած է այս մտորման առաջ:

Գո՞հ է սակայն Աթաբէկեան իր դիտողութեան արդիւնքից եւ հալածւո՞ւ էր եւս ոյժները ճշգրտօրէն դնահատելու դիտակցութիւնից: Եթէ երբեմն կեանքը մի հանելուկ էր, այժմ այն իւր դիտակցութեան առաջ դաժան է, մերթ դաղանային: Այստեղ զուր է արդարութիւն տեսնել, զի արարչագործութիւնից ի վեր մարդը իւր վրա կրում է Եհովայի դրած նզովքը — տառապել բովանդակ կեանքի ընթացքում, անաղատ կամքի հետեւանքով կատարել իրեն ի վերուստ պարտադրւած հրահանգներ, ոչինչ իմանալ կեանքի ամբողջ ընթացքում եւ իմացութեան սահմանին հասնելիս՝ մեռնել: Կարօտի ցաւով յիշում է Աթաբէկեան այն շրջանը, երբ իւր շուրջը «վառ շողերի եւ գոյների հեղեղ էր»: Անցել է նա այդ շրջանը կոյր աչքերով: Տարիների ընթացքում եւ կեանքի հասունութեան համընթաց՝ նա տեսնում է, որ իր պրպտումներն ի զուր են անցել. լաւի տենչանքը մնացել է միշտ տենչանք, զի այլի որոնումներում անհատը միշտ իրեն է դառնում ուրիշների մէջ: Եւ ուրիշների մէջ իրենց եւ ոչ իրեն գտնելու տենչը նրա մտքին մի դիտողութիւն — ուսումնասիրութիւնից դէպի մի այլն է վարում: Երբ Աթաբէկեանին թւում է, թէ դրութիւնը պարզ է արդէն իր համար, քալիքն է գալիս եւ յաւիտենական սկեպտիկին յատուկ, հարցը ցցւում իր առաջ — յետո՞յ ինչ... Ըստ այսմ՝ պրպտումները միջոցներ են միայն իր համար, մոռացութեան պահեր, զի՝

Մայր բնութիւնը իբրեւ սփոփանք
եւ իբրեւ խթան յարատեւ կեանքի,
Տունը է մարդուն պատրանքն օգտակար
պատասխանատու եւ ազատ կամքի:

Մարդիկ «ֆիչ ֆիչ ապրում են եւ ֆիչ ֆիչ մեռնում»: Դրանց կեանքը կազմւած է «մի փշուր մահից եւ մի կտոր կեանքից»:

Եւ իր հերքական շրջագայութեան

ժողովուրդն ագահ

Անմիտ, անկեղծ, պատրաստ ու յօժար

մի դի է գտնում:

Այս՝ ինքն իր մէջ եւ իր հետ :

Բայց Աթաբէկեան նաեւ զանգւածների ղեկավար է եւ տեսնում է, թէ ի՞նչպէս նրանք «սողում են դէպի լեռները՝ խեղդելու համար երջանիկներին՝ իրենց մարմարեղէն պալատների մէջ» : Թւում է, այս էլ «Զեւի անշող վանդակում քայրտացող» մի հերթական հրապուրանք է . դի Աթաբէկեան մտածողի համար ցեխի մէջ սողացողն ու պալատներում սիրաճեմողը կոյր դիպածի տարբեր արտայայտութիւններն են միայն, եւ երկուսն էլ կրում են իրենց ուսերին պատահականութեան ու Եհովայի անէծքը : Սոցիալական կուտուրտորդերը երեւոյթապէս տեսնում է հասարակական ցաւը, այն ժամանակ դեռ եւս աւելի քիչ սրբադրած մարքսեան չափանիշով՝ դասերի պայքար, բայց իբրեւ Միխայիլովսկու եւ Լաւրովի աշակերտ, ցաւի բուժման ձեւը որոնելիս՝ մի կողմում տեսնում է «գորշ հողագնդի կեդիւր հեգորէն փոքրիկ անգիտակից զանգւած», իսկ միւս կողմում՝ գիտակից առաքեալների սակաւաթիւ խմբակ, որ շատ յաճախ անգոր է փրկել դրութիւնը, քանի դեռ ընդհանուր գիտակցական ներդաշնակութեամբ՝ դասերի պայքարը չի փոխարինւել եւ ընդհանուր համագործակցութեան : Այս էլ կարծես ցնորք է, եթէ ի նկատի ունենանք ընթացիկ հանրակարգն ու մարդու բնածին նրկարգիւրը, որ հակասանք է յաճախ իրերի աւելի նպատակայարմար կարգաւորման :

Իբրեւ զանգւածների ղեկավար, որ դիտում է սրանց թշառութիւնը եւ անգոր է բուժել ցաւը՝ անադատ կամքի եւ մարդկային հնարաւորութեանց սահմանափակութեան գիտակցութեան շնորհիւ, Աթաբէկեան իւր աղերսալից հայեացքն ուղղում է դէպի, կեանքում ամեն ինչ նախորոշող, գերադոյն ոյժը .

Մեր աղերսալից չոր բագուկները, տե՛ս, տարածել ենք Աղօթքով առ քեզ .

Դու, որ պիտի գաս,

Դու, որ չես կարող չգալ փրկութեան :

Արի՛, արձակիր մեր ծանր շղթան :

Խարկանք է միայն : Աթաբէկեան գիտէ, որ համայնական աղերսանքով դրութիւնը չի փրկւում : Որոնող միտքը իւր հոգում կառուցած շատ այլ դրութիւնների վրայով փրկութեան մի նոր ճամբայ է փնտրում : Նա գիտէ, որ ամբոխի գործը չէ, թէ դրութիւններ կան, երբ մարդարէն անգոր է որեւէ վճիռ կայացնել . պահանջը փոքր կուլթիւնն է : Եւ մարդարէն գիտակցութեամբ տողորուն Աթաբէկեա-

նի միտքն լսմեն տեղ վերջին հաշուով ունայնութիւն տեսնելով՝ նա հանջի է դիմում կարծես այստեղ էլ: Կաշկանդումներէից խուսափող, ազատութիւն որոնող հոգին ի՞նչ կարող է տեսնել դրաւիչ կեանքում, երբ ինքը մի վերին անյայտ կամքի հլու կամակատարն է միայն: Եւ ի՞նչը պիտի դոհացում տայ նրան կեանքում. յիշեալ զանգաւածներէ իրեն շնորհած փա՞ռքը: Բայց՝

Ի՞նչ է փառքը: Մի ծիածան

Մի հրաշէջ

Արեւի շող, որ բեկւել է

Արցունքի մէջ:

Փառքով հրապուրւելուն արգելք է միտքը, որի ձեռքից ազատում չունի ինքը:

Այդ միտքը իրեն ամենազօրութեան առաջ չկանգնեցրեց: Ընդհակառակը մարդուն ստիպեց ծունկի դալ մի անյայտ զօրութեան առաջ, որի հրահանգներով պայմանաւորւում է իր ընթացիկ կեանքը: Իդէալի ու փաստի համադրութիւնը նրան տանջանքից տանջանք է առաջնորդում: Երանութեան յոյզով է յիշւում վերելքի այն շրջանը, երբ զգացմունքներն էին գերիշխում, եւ պատանու դեռ եւս զարգացող ու անկազմակերպ միտքն անկարող էր դրանց դրաւիչ շղարշի յետեւից կեանքի ժանտ դիմադիծը տեսնել: Եւ ո՞րն է այդ զգացմունքներից ամենատեղի ու անդաւադիրը, որ, իբրեւ այդպիսին, մնում է սրբութիւն սրբոց անգամ շեշտած թերահաւատի համար, եթէ ոչ մայրական սէրը: Սրան է նւիրւած եւ Աթաբէկեանի յուզական աշխարհի — բանաստեղծութեանց ժողովածուն:

Մայր չէ՞ արդեօք յիշողը, երբ դիտակորոյս մարդը փրկութեան խարխիւ է որոնում: Մօր բացը չէ՞ արդեօք ամենամեծ հոգսը օտարութեան մէջ հիւժուղ պանդխտի: Մայրը յիշւում է բանտի զընդաններում եւ իրականութեան ցաւից իր փրկութիւնը թմրութեան ու քնի մէջ որոնողի ականջին մեղմ օրօր է ասում.

Թիմրն անոյշ պարտւում է դանդաղօրէն

իմ հոգին...

... Եւ իմ հոգին դարձել է մի միօրինակ

մեղեդի...

... Մայրս է այդ... օրօրում է, օրօրում է

ու երգում

Իր լայ — լայը... Ես չըգիտեմ՝ երագում եմ,

քէ մեռնում...

Մօր անունը հոլովւում է եւ մահամերձի բերանում, երբ երկրայինը դառնում է մշուշ եւ գիտակցութիւնից հրաժարւող մահկա-

նացուն անըմբռնելի թոթովներ է արձակում՝ իրրեւ կեանքից հրա-
ժարւելու վերջին հառաչ: Այստեղ խաղաղութիւն է իջնում մարդու
վրա, ըստ որում Աթաբէկեանի անհանգիստ հոգին դառնում է հեղ
եւ գթառատ – գթառատ մի մօր պէս: Եւ ոգոկոչւում է մայրականը
բանտի կամարներէ տակ որդու «Շողիմ կարօտ, ձայնիմ կարօտ իր
վշտաւ մօր»:

Մայր ու հայրենական տուն այնտեղ էին՝ Ղարաբաղում: Մայր
ու հայրենաբաղձութիւն միաձուլւում են: Մոռացւում է կեանքի
տանջանքը, մեղմանում անձնական ոչնչութեան գիտակցութիւնը:
Աթաբէկեանի սիրտը սուրում է դէպի հայրենի լեռները, ուր ջրերը
յորդում էին եւ արծիւները բոյն հիւսում: Յորդում են եւ բանաս-
տեղծ – Աթաբէկեանի զգացմունքները. մանկութեան որրանի յու-
շերը քաղցր մեղեդի են չչնջում իր ականջին եւ կանչում են նրան.

Հէյ, սարսաբաւ
Իմ վաթան!
Թուխպի ծով...

Մտամուր
Արաքետ!
Խրխնջոց...

Այ, փափաբաւ
Ասկերան!
Մարմանդ հով...

Ոլոր – մուր
Ձորագետ!
Քչֆչոց...

Մըռասաւար
Զիզիլան!
Արծւի բուն...

Հէյ սարսաբաւ
Ղարաբաղ!
Մայր ու տուն...

Խելաւ քարքաւ
Փրփրան!
Դղրդիւն...

Այ, փափաբաւ
Մուրով – դաղ!
Մանկութիւն...

Մանկացած Աթաբէկեան մի պահ մոռացման է մատնւում: Ման-
կութիւնն անհոգ էր ու երջանիկ, իսկ այսօրը, իսկ վերջը...

Մռայլ մտքի մի կամար է ձգւում անցեալի ու վերջի միջեւ.

Ամեն ինչ երազ է
Լաց մի՛ լինիր:

Ահա վերջը: Թուչում է գրաւիչ անուրջը՝ իր հետ տանելով ե՛ւ
մօր յիշատակ, ե՛ւ հայրենի ծննդավայր: Ու նորէն քանաստեղծը իւր
տեղը գիջում է մտածողին: Աթաբէկեան վերյիշում է, որ իր սրտին
վաղուց տուն է ուղարկել եւ մտքի ցաւը կրկին ցցւում է իր առաջ:
Նա անճարակութեան գիտակցութեան հետ չհաշտուող, բայց իրապէս
անճարակ ի՛ր իսկ մտքի շնորհիւ, ակամայ, թերեւս անձնական վի-

բաւորանքի նշանատացնող գիտակցութեամբ այլեւս «Յոգնութեան երգեր» ուլ, կուչ է գալիս աղօթքի աղերսանքների մէջ, փրկութիւն հայցում այս անգամ արդէն իրենից – «Փրկիր ինձ ինձնից...»

Դո՛ւ, որ կաս անշուշտ!

Դու, որ չես կարող չըլինել հիմա!

Դքառատ աչքդ դարձուր իմ ցաւին!

Վերլիշումներիս օձերը գազիր

Սողում եմ ահա

Յոգնատանջ մտքիս խորունկ ծալքերից.

Հոգիս դարձել է սեւ նալկանքների մի խաւար
մնին...

Դո՛ւ, որ չես կարող չըլինել հիմա,

Տո՛ւր մոռացութիւն ցաւագար մտքիս.

Փրկիր ինձ ինձնից:

Տե՛ս, էլ անգոր եմ ինքս իմ դիմաց

Եւ կրնկեմ շուտով ինձնից ինձ տուած հագար
վերքերից...

Ողորմած շունչով հանգցուր հոգուս մէջ

Անասնձ կրքերիս հրդեհն արիւնստ

Եւ ազատիր ինձ

Իմ վայրագ սիրուց եւ իմ կատաղի ատելութիւնից!

Դո՛ւ, որ չես կարող չըլինել հիմա,

Տուր խաղաղութիւն ալեծովի սրտիս.

Փրկիր ինձ ինձնից:

Զփորձե՞լ արդեօք բանալ կեանքի ամենամեծ առեղծւածի – մահւան դաղտնիքը. առ առաւելն, երբ գիտակցած կեանքը տանջանք է, մինչդեռ մահը՝ անյայտութիւն, ապա ուրեմն եւ մի նոր որոնման դուռ: Աթաբէկեանի միտքն իր համար անյայտ գծեր չէր հանդուրժում: Ո՛ւլ գիտէ, թերեւս եւ այդ անյայտ յայտնագործելու ճիգն էր պատճառը, որ նա դիմեց դէպի մահ, գուցէ եւ փրկելու համար իրեն իրենից: Յաւիտեանական սկեպտիկը զնաց թերեւս տիեզերքի ծալքերում որոնելու կամքի իրական այն ազատութիւնը, որը չգտնելու հետեւանքով, կեանքն իր համար դարձել էր ամեն նօրեայ մահերի փոքրիկ կտորների շարան:

Պարիզ.